

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱՐԿԱՆԻ
ՄԱՐՏԻԿԱՆ ԱԽՐԱԴՈՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ՍԱՐԳԻՍ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱ-ԳԻՏԱՐԵՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԹՅՈՒՆ



9/47-925/ 5579

Л-15 Гиацинтовый

Орхидейный Лимонный

Цирина Бирюзовый
Зн.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿԱՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9(47.925)27

ԱՍՏՐԻԴԱՆ է 1861 թ.

15-15

ԱՐՄՈ ՄԱԼԻԱՍՑԱՆ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ՍԱՐԳԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍԱՆ

A I 5579
2000

ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1944

ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Պատ. Խմբագիր Հ. Ա.Ա.Վ.Ն.Յ.Ա.Ն.

Շապիկը նկարիչ Մ. Ն. ՄՈՒսԻ

Академия Наук Армянской ССР

Институт Истории

Боевые подвиги сынов Армении

АРМО МАЛХАСЯН

ГЕНЕРАЛ-МАЙОР
САРКИС МАРТИРОСЯН


(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1944

Վ.Ֆ. 01974. Պատվեր № 496. Հրատ. № 232. Տիրաժ 4000.

ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅ. Ակադեմիայի 1 տպ., Երևան





Սովետական սրբադան հողը գերմանաւ
ֆաշիստական զավթիչներից աղատագրելու
համար մղվող Հայրենական մեծ պատերազ-
մում մարտական փառահեղ ուղի է անցել
հայ ժողովրդի քաջարի դավակ, գեներալ-մա-
յոր Մարգիս Մարտիրոսյանը։ Նրա անունը
շատ անդամ է հիշատակվել Սովետական
ինքորմբյուրոյի հաղորդագրություններում
և Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սո-
վետական Միության Մարշալ ընկեր Ստա-
լինի հաղթանակ ավետող հրամաններում։
Գեներալ-մայոր Մ. Մարտիրոսյանը թըշ-
նամուն ջարդել ու հետապնդել է Մոսկ-
վայի, Տուլայի և Վորոնեժի մատուցնե-
րից մինչև Ռումինիայի մայրաքաղաք
Բուխարեստը։ Բարձնովո, Ռևյակինո, Ռադ-
նեո, Ալեքսին, Կատումինո, Յուլինով, Կալու-
գա, Վորոնեժ, Բելգորոդ, Խարկով, Սումի,
Ռամի, Պրիլուկի, Կիև, Վալասիկով, Բե-
լյայա Ցերկով քաղաքները և մի շարք ոռու-

մինական քաղաքներ—ահա թշնամուն հետապնդելու նրա մարտերի ուղին: Գեներալ-մայոր Մարտիրոսյանն այն զորավար-ներից մեկն է, որոնք առաջինը հասան ՍՍՌՄ-ի պետական սահման՝ Պրուտ գետին, մտան թշնամու տերիտորիան: Գեներալ-մայոր Ա. Մարտիրոսյանը մասնակցեց ոռոմինական Դորոխոյ, Բոտոշանի և Յասի քաղաքների գրավմանն ու իր պանծալի զորքերով մտավ Բուխարեստ:

Կարմիրբանակայինից մինչև կորպուսի հրամանատար—ահա գեներալ-մայոր Մարտիրոս Մարտիրոսյանի մարտական ուղին:

* *

Գեներալ-մայոր Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը ծնվել է 1900 թվի սեպտեմբերի 21-ին Շամախու շրջանի Մարգասա գյուղում: Նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Պատանի Սարգիսը մեծ սիրով էր ուսումնասիրում հայ ժողովրդի կուլտուրան, պատ-

մությունը, նրա մարտական տրադիցիաները, ոգևորվում հայրենասեր դորավարներով, որոնք կենաց ու մահու ահեղ մարտեր են մղել օտարերկրյա զավթիչների գեմ: Մարտիւրոսյանին չհաջողվեց ուսումը վերջացնել:

Պատանի Սարգիսը թողնելով ուսումը, մտնում է հասարակական կյանքի ոլորտը: 1918 թվին կամավոր կերպով մտնելով նոր կազմակերպված Կարմիր Բանակի շարքերը, նա զենքը ձեռքին ակտիվ մասնակցում է Բաքուն կոնտրունկրուցիայից մաքրելու գործին և ապա, իրեն կարմիր մարտիկ, մասնակցում է Աղբյաջանի և Հայաստանի քաղաքացիական կռիմսերին: Մարտիրոսյանը անցել է քաղաքացիական դաժան կռիմսերի բովից՝ իր առաջին մարտական մկրտությունն ստանալով բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ոխերիմ թշնամու դեմ մղվող մարտերում: Հենց այդ ժամանակ, սոցիալիստական հայրենիքի համար մղվող կատաղի մարտերի օրերին, Մարտիրոսյանը մտնում է Լենինի—Ստալինի պարտիայի շարքերը և վերջնականակես զինվորագըր-

վում Կարմիր Բանակին: Լինելով Կարմիր
Բանակի շարքերում՝ բոլշևիկ Մարտիրո-
սյանը սիրում է զինվորական գործը և մտա-
ծում իր ռազմական գիտելիքները խորաց-
նելու մասին:

1923 թվին կարմիրբանակային Սար-
դիս Մատիրոսյանն ընդունվում է Թբիլիսիի՝
հրամկադմի կատարելագործման դասընթաց-
ները և ավարտում 1925 թվին: Նորավարտ
հրամանատարն աշխատանքի է նշանակվում
Հայկական հրաձիգ դիվիզիայի 2-րդ գնդում.
Դրանով էլ սկսվում է նրա զինվորական կար-
յերան: Եռանդուն հրամանատարը 17 տարի
շարունակ զանազան պատասխանատու պաշ-
տոններ է վարել Վորոշիլովի անվան Հայկա-
կան լեռնատ-հրաձգային դիվիզիայում և նրա
շտաբում մինչև 1937 թիվը: Նա միշտ ձգտել
է հարստացնել ռազմական գիտելիքների
իր պաշտամը: 1927—38 թ. թ. նա ընդուն-
վում է Մոսկվայի՝ բարձրագույն հրամկադ-
մի կատարելագործման դասընթացները:

1939 թվից Ս. Մարտիրոսյանին տեղա-
փոխում են Ռուսաստան, նշանակում ավելի

պատասխանառու պաշտոնի՝ դիվիզիաներից
մեկի շտաբի պետ: 1939 թվին նա ակտիվ
մասնակցություն է ունենում Արևմտյան Ռւկ-
րաբնայի և Արևմտյան Բելոռուսիայի ազա-
տագրման մարտերին: Ապա 1939—40 թվե-
րին մենք նրան տեսնում ենք հեռավոր
Կարելյան պարանոցում, Թինլանդիայի ան-
անցանելի ճահիճներում ու անտառներում
սպիտակ-փենների դեմ դաժան մարտեր մղող
կարմիր Բանակի առաջավոր շարքերում:

Սարգիս Մարտիրոսյանը աճել ու դաս-
տիարակվել է Կարմիր Բանակի շարքերում
և որպես հայրենիքի հավատարիմ զավակ՝
նա այլ կյանք չի ունեցել, բացի հայրենի-
քին և Լենինի—Ստալինի պարտիային ծա-
ռայելը:

Քառորդ դարից ավելի է, որ Սարգիս
Մարտիրոսյանը գտնվում է իր հայրենիքին
ծառայելու մարտական պոստում՝ Բանվո-
րա-Գյուղացիական Կարմիր Բանակի շար-
քերում:

Թե քաղաքացիական պատերազմի դա-
ժան տարիներին, թե սոցիալիզմի շինարա-

ըության շրջանում և թե ֆաշիստական
Գերմանիայի ու նրա վասալների դեմ մղվող
ահեղ մարտերի ժամանակ Սարգիս Մարտի-
րոսյանը եղել է մեր երկրի զինված ուժերի
առաջավոր շարքերում, իր ամբողջ ուժն ու
եռանդն ի սպաս է գրել Սովետական Միու-
թյան պաշտպանության գործին:

Արևմտյան Բելոռուսիայի ազատագրու-
մանը մասնակցելուց հետո փոխգնդապետ
Սարգիս Մարտիրոսյանն իրեն դիվիզիայի
շտաբի պետ մնում է արևմտյան մեր սահմա-
նագլխում: Հայրենական մեծ պատերազմի
հենց առաջին օրերից Մարտիրոսյանն ակ-
տիվ մասնակցություն է ունեցել գերմանա-
կան զավթիչների դեմ մղվող պայքարին՝
նախ հարավային և ապա հարավ-արևմտյան
ռազմաճակատներում, իրեն դիվիզիայի շտա-
բի պետ:

1941 թվի աշնանը, երբ մեր հայրենի-
քի մայրաքաղաք Սոսկվային մահացու
վտանգ էր սպառնում, Գլխավոր Հրամանա-
տարությունը հանձնարարում է գնդապետ
Մարտիրոսյանին Վոլգայի ափին՝ Բալա-

շուկ քաղաքում նոր դիվիզիա կազմել և
կռվի մտնել մայրաքաղաքի շրջանում։
Գնդապետ Մարտիրոսյանը կազմակերպում
է 340-րդ հրաձգային դիվիզիան, որը հետա-
գայում մեծ դեր խաղաց մեր հայրենիքի
համար մղվող մարտերում։

Դրությունը ծանր էր։ Նորակազմ դիվի-
զիան մեծ համառությամբ ձեռնամուխ եղավ
մարտական և քաղաքական ուսուցման գոր-
ծին։ Մարտիրոսյանը գիշեր-ցերեկ հանգիստ
չուներ։ Նա դիվիզիայի անձնակազմին վար-
ժեցնում էր զենքի և տեխնիկայի բոլոր տե-
սակների գործածման ճիշտ եղանակներին։
Այսպես ահա ծնվեց ապագա Սումիյան-Կիւ-
յան կարմրադրոշ 340-րդ հրաձգային դիվի-
զիան։

1941 թվի վերջին դրությունն ավելի
լրջացավ. թշնամին արդեն հասել էր Մոսկ-
վայի գոնսերին։

Տիսրահոչակ գեներալ Գուղերիանիի՝ տան-
կային զորամասերը կատաղի կերպով խցկը-
վում էին Մոսկվայի և Տուլայի արանքը,
որպեսզի Տուլան կտրեն Մոսկվայից։ Այդ

ծանր օրերին լսվեց մեր մեծ զորավար ընկեր Ստալինի մարտահրավիրը՝ «Թշնամին Մոսկվայի մոտ պետք է ջախջախի»։ Արձագանգելով Գերագույն Գլխավոր Հրամանատար, Մովեսական Միության Մարշալ ընկեր Ստալինի մարտակոչին՝ գնդապետ Ս. Մարտիրոսյանը 1941 թ. գեկտեմբերի 4-ին վըճռական մարտի նետվեց։

Վեցօրյա կատաղի կոփիֆսերից հետո դիվիդիան Տուլայի մարզում ազատազրեց Բարանովսն, Ռեյակինսոն, Ռաշնեսոն և 80 այլ բնակավայր։ Համագործակցելով Կարմիր Բանակի այլ միավորումների հետ՝ նա Գուդիրիանիի խմբի աւանկային զորամասերը ջախջախողներից մեկը եղավ։ Այս մարտերում Մարտիրոսյանի դիվիդիան ոչնչացրեց գերմանական ավելի քան 2000 զինվոր ու սպա, գրավեց 10 տանկ, 145 ավտոմեքենա, 15 հրանոթ և շատ այլ ռազմաավար։ Այս առաջին մարտական մեծ մկրտությունը նոր լիցք տվեց Մարտիրոսյանի դյուցառուններին։

Զարգացնելով հաջող հարձակումը՝ Մար-

տիրոսյանի քաջերը մինչև գոտկատեղը ձյան
մեջ խրվելով, հետապնդեցին թշնամուն՝
մասնակցելով Ալեքսին, Կալուդա, Յուլինով
քաղաքների աղատազրմանը:

Տուլայի շրջանում տարած հաղթանակ-
ներից հետո Մարտիրոսյանը նոր հրաման
ստացավ՝ սրբնթաց հարձակվել Կալուգա
քաղաքի վրա: Այդ բնագծում թշնամին
ամուր խրամատավորվել էր դզօտերում և
դզօտերում: Առաջ շարժվելը համարյա թե
անհնար էր: Բայց գնդապետ Մարտիրո-
սյանն ամեն մի դժվարին դրությունից դուրս
գալու ելք էր գտնում: Նա հետախուզական
կործանիչ խմբեր կաղմակերպեց. որոնք
հանկարծակի հարձակվելով գերմանական
կայազորների վրա՝ շեշտակի հարվածով ոչըն-
չացը թշնամու ամրացված կրակակետերը:
Ահեղ մարտերից հետո Մարտիրոսյանի դո-
րամասերը ճեղքեցին թշնամու խորը էշելու-
նացված պաշտպանության բնագիծը, որով
կտրվեց Կալուգա—Մալոյարոսլավեց երկաթ-
ուղին և փակվեց թշնամու նահանջի ճա-
նապարհը: Ամենից առաջ Կալուգա քաղաքը

մտան Մարտիրոսյանի դիվիզիայի քաջարի
մարտիկներն ու սպաները:

Տուլայի և Կալուգայի համար կատարված գործողությունների ընթացքում դիվիզիան մարտերով անցավ 270 կիլոմետր տարածություն, աղատագրեց 360 բնակավայր, ոչնչացրեց և գրավեց թշնամուց ահագինքանակությամբ ռազմական տեխնիկա, վերցրեց շատ գերիներ:

Տուլայի պաշտպանության և Կալուգան աղատագրելու համար գնդապետ Մարտիրոսյանի դիվիզիայից 670 մարտիկ ու սպապարգեստարվեցին շքանշաններով: Ինքը՝ գնդապետ Մարտիրոսյանը պարզեց Կարմիր Դրոշի շքանշանով:

Մարտիրոսյանին Կարմիր Դրոշի շքանշանով պարզեցատրելու առթիվ գեներալ-լեյտենանտ Զախարկինի ստորագրությամբ N շանակի Ռազմական Խորհուրդը շնորհավորական հեռագիր ուղարկեց նրան, որտեղ ասված էր.

«Բանակի Ռազմական Խորհուրդը ջերմագին ողջունում է Զեղ կառավարական

բարձր պարզեց՝ Կարմիր Դրոշի շքանշառ
նով պարզեատրվելու առթիվ:

Ձեր ղեկավարությամբ դիվիզիան անցել
է փառավոր ուղի և լուրջ հարված է հասց-
ըել գերմանա-ֆաշիստական զորքերին: Մենք
հավատացած ենք, որ ապագա մարտերում
Դուք կցուցաբերեք ավելի և մեծ արիու-
թյուն և հմտություն զորամասերի մարտա-
կան գործունեությունը ղեկավարելու առ-
պարեզում:

1941—42 թ.թ. ձմեռային հաջող գործու-
ղություններից հետո Մարտիրոսյանի դիվի-
զիան փոխադրվեց Բըյանսկ—Վորոնեժի ռազ-
մաճակատը:

Վորոնեժից հյուսիս Յակովլես—Խըռչու-
վո, Լամսովո—Սուրիկովո շրջաններում տեղի
ունեցած պաշտպանողական մարտերում, երբ
նենք թշնամին առաջ էր նետում մեծա-
քանակ տեխնիկայով դինված նորանոր ու-
ժեր, գնդապետ Մարտիրոսյանի զորամա-
սերն այնտեղ և առաջադրանքը կատարե-
ցին պատվով ու փառքով, թշնամուն թույլ
չտվին մի քայլ անգամ առաջանալու և ու-

ժասալառ անելով ոչնչացրին նրա կենդանի
ուժն ու տեխնիկան։ Այդ ահեղ մարտերի
ժամանակ 340-րդ հրաձգային դիվիզիան
կամավոր եկավ գնդապետ Մարտիրոսյանի
որդին, դեռևս 17 տարեկան պատանի Մարսել
Մարտիրոսյանը։ Կարճ ժամանակամիջոցում
գնդապետ Մարտիրոսյանի զավակը դարձավ
դիվիզիայում անվանի հետախույզ։

Այդ ջերմեռանդ հայրենասեր պատանին
քանի՛քանի անգամ խիզախորեն մահվան
աչքին է նայել՝ հրամանատարության ամեն-
նալատասխանատու հանձնարարություն-
ները կատարելիս։ Վերջին անգամ նա
մենամարտի նետվեց հրամանատարա-
կան կետի վրա հարձակվող գերմանական
երկու տանկերի դեմ ու հակատանկային
նոնակներով ոչնչացրեց պողպատյա այդ
ամրոցները։ Բայց ավագ բոցավառվող տան-
կերից մեկի կըակի մեջ անհետացավ նաև
Մարսելը։ Այդ պահին 500 մետր հեռու,
բլուրի վրա կանգնած Մարգիս Մարտիրո-
սյանը լուս, որոնող աչքերով՝ այրվող տան-
կերի բոցերի մեջ փնտում էր հերոս զա-

վակին, Նա գիտեր, որ թշնամու տանկերը
ոչնչացնողը Մարսելն էր:

— Ընկեր գնդապետ, թույլ տվեք իմաւ
նաև այդ հերոս մարտիկի աղքանունը և
ներկայացնել հետմահվան պարզեւառլման,—
խնդրեց գնդապետի կողքին կանգնած կա-
պիտանը, որ չգիտեր պատահու ով լինելը:

Բայց մարտը թիժ էր, և որդուն սիրող
հորը չհաջողվից ստուգել պատահի հերոսի
վախճանը:

A 2000
Գնդապետ Մարտիրոսյանի համար ծանր
էր Մարսելի կորուստը, սակայն զորք և
մարտեր զեկավարող հայրենասեր հրամա-
նատար Մարտիրոսյանը իր հոգու ամբողջ
խորությամբ ապրում էր նաև իր մեծ հայ-
րենիքի ծանր վիճակով։ Կրկնակի վիշտ։
Նա խոժոռած հայացքով վերջին անգամ
նայեց այն կետին, որտեղ անհետացավ
խիզախ զավակը։ Ի նշան հայրական հար-
զանքի՝ գնդապետն իջեցրեց իր գլխարկը...

Անցավ մեկ օր, Մարտիրոսյանը շտարի
պետի տեղակալին հարցրեց.

— Ընկեր կապիտան, դուք իմացմք երեկ
ուն ուղարկեցիք տանկերի դեմ։
— Ոչ, ընկեր գնդապետ։
— Նա իմ որդին էր...

* * *

1942 թ. հունիսի 20-ին գնդապետ Մարտիրոսյանը նոր հրաման ստացավ՝ անցնել ուղմաճակատի մի նոր հատված, կատարել պատասխանատու խնդիր՝ Վարոնիժի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերին թերից և թիկունքից կործանիչ հարվածներ տալով ոչնչացնել։

Այդ առթիվ Մարտիրոսյանը մի բոցաշունչ կոչով դիմեց իր մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին.

«Վարոնիժի ուղմաճակատի քաջարի գորակասերը ջախջախում են հիտլերյան ավագակներին Վարոնիժի մոտ, նրանց ետ են մղում դեպի Դոն և ոչնչացնում են սովետական զենքի ամբողջ հզորությամբ։ Մեր զորամասերի առաջ դրվել է պատվավոր և պատասխանատու խնդիր, այն է՝ ուղմա-

Ճակատի մեր հատվածներում հարված հասցանել հակառակորդի թևերին ու թիկունքին, ջախջախել ու ոչնչացնել գերմանական զավթիչներին և ապահովել Վորոնեժի մոտ գտնվող թշնամու խմբավորման վերջնական ջախջախման ընդհանուր պլանի կատարումը։
Առաջ, ընկերներ, սովետական մարտիկներ։

Առաջ, հիտլերյան սրիկաներին ջախջախելու համար։

Բանակայիններն ու սպայական կազմը ոգեռքած սիրելի հրամանատարի կոչով՝ ծնկաչոք երդվեցին չխայել իրենց արյան վերջին կաթիլը, կովել հանուն հայրենիքի, հանուն սիրելի առաջնորդ Ստալինի։

Դիվիդիան անցավ հարձակման։

Մարտիրոսյանի դիվիդիան կատաղի կոիվ էր մղում գեներալ Պրոյսլերի զրահատանկային միավորումների դեմ։ Հուլիսի 12-ին գերմանացիները խոշոր հարձակում սկսեցին Մարտիրոսյանի դիվիդիայի ձախթերի վրա։ Այդ հարձակմանը մասնակցում էին թշնամու մոտ 150 տանկ և մեծ թվով

հետևակ: Ստեղծվեց ծանր գրություն: Մակայն Մարտիրոսյանի դինվորները տանկերից էլ ուժեղ դուրս եկան. նրանք չցնցվեցին, ամուր մնացին իրենց դիրքերում և հերոսաբար ետ էին մղում թշնամու կրկընվող գրոհները:

Վորոնեժի մատուցներում ծավալված գրիթե մեկ ամսվա մարտերում գնդապետ Մարտիրոսյանի զորքերը հակառակորդին լուրջ պարտություն պատճառեցին, որի հետեանքով գերմանացիները կորցրին միայն սպանված 8000 դինվոր ու սպա, ցիրուցան արվեց հակառակորդի 15 գումարտակ, ոչնչացվեց և խփվեց 85 տանկ, 37 հրանոթ, 40 ականանետ, թշնամուց ազատագրվեց ավելի քան 200 բնակավայր:

Այս կատաղի մարտերում Ս. Մարտիրոսյանը ցուցաբերեց զորամասերը հըմտորեն դիկավարելու տաղանդ, մարտեր վարելու ռազմական արվեստի բարձր ունակություն: Ահա այդ նկատի ունենալով ՍՍՌՄ Ժողկոմառվեալ իր 1942 թ. գեկտեմբերի 20-ի որոշմամբ Սարդիս Սողոմո-

Նի Մարտիրոսյանին շնորհեց գեներալ-մաշորի զինվորական կոչում։ 1943 թ. հունվարին գեներալ-մաշոր Մարտիրոսյանի զինվիքիան հրաման ստացավ՝ Վորոնեժի մարզի Մելյալնոյե շրջանում ճեղքել հակառակորդի պաշտպանական գոտին, որը գրավելէր հունգարական 7-րդ հետևակալային զիվիքիան և որտեղ հակառակորդը 6 ամիս շարունակ ինժեներական կառուցումներ էր պատրաստում։

Մարտիրոսյանի զիվիքիան անցավ հարձակման, ճեղքեց հունգարացիների պաշտպանությունը՝ 10—12 կիլոմետր խորությամբ և այդպիսով լանակի միավորումների հարձակողական լայն գործողությունների սկիզբ դրեց։

Դիվիզիան նոր խնդիր ստացավ՝ գրավել Օստրոգոժսկ քաղաքը։ Յոթ օրվա կատաղի մարտերից հետո Օստրոգոժսկը գրավվեց։ Հակառակորդը ստիպված եղավ նահանջել հարավ-արևելյան ուղղությամբ։

Շարունակելով հակառակորդի հետապնդումը Բելգորոդի ուղղությամբ՝ Մարտի-

բոսյանի դիվիզիան բանակի մյուս միավորութերի հետ համագործակցելով՝ գրավեց Բելգորոդ քաղաքը և առաջադրանք ստացավ հարձակում սկսել Խարկովի դեմ:

Կտրելով Բելգորոդ—Խարկով խճուղին՝ Մարտիրոսյանը հնարավորություն տվից Ն բանակի զորամասերին թևանցել Խարկովում պաշտպանվող հակառակորդին և թևից հարված հասցնել նրան:

Իր կատարած սխրագործությունների համար գեներալ-մայոր Մարտիրոսյանի ղեկավարած 340-րդ փառապանծ դիվիզիան 1943 թ. հունվարի 14-ին ռազմաճակատի Ռազմական Խորհրդից ստացավ ողջույնի հետեւյալ հեռակիրը, որը ստորագրել էին գեներալներ Գոլիկովը, Կուզնեցովը, Կացակովը և Տագազնին:

«1943 թ. հունվարի 12-ի և 13-ի ընթացքում 340-րդ հրաձգային դիվիզիան գործել է լարված իրադրության մեջ: 340-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը վճռականորեն և համարձակ կերպով հաղթահա-

բում էին հակառակորդի համառ դիմադրությունը:

Անձնուրաց և հմուտ գործողությունների համար ռազմաճակատի Ռազմական Խորհուրդը դիվիզիայի անձնակազմին հայտնում է շնորհակալություն:

Առանձնապես նշում եմ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանի լավ աշխատանքը մարտերը դեկավարելու գործում:

Մարտական գործողությունները հմտութեն և արիաբար դեկավարելու, այդ գործողությունների հետևանքով ձեռք բերած հաջողությունների համար ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության 1943 թվականի փետրվարի 8-ի հրամանով գեներալ-մայոր Մարտիրոսյանը պարգեատրվում է Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով:

Այդ առթիվ Վորոնեժի ռազմաճակատի Ռազմական Խորհուրդը Մարտիրոսյանին հետևյալ շնորհավորական հեռագիրն է ուղարկում.

Վորոնեժի ռազմաձևկատի հայր

9.2. 1943թ.

ՍԱՐԳԻՍ ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

ԱՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1943 թ. փետրվարի 8-ի Հրամանագրով՝ Դուք պարգևատրվել եք Սովորովի 2-րդ աստիճանի շքանշանով։

Ռազմաճակատի Ռազմական Խորհուրդը շնորհավորում է Ձեզ կառավարական բարձր պարգևի առթիվ և ցանկանում է ավելի մեծ հաջողություններ գերմանական օկուպանտներին ջախջախելու գործում։

Վորոնեժի ռազմաճակատի
հրամանատար՝ ԳՈԼԻԿՈՎ

Ռազմական Խորհրդի անդամ՝
ԿՈՒԶԵՑՈՎ

Մեր պարտիայի ու կառավարության հոգատար վերաբերմունքից քաջալերված՝ դեներալ-մայոր Ս. Մարտիրոսյանը զորամասերը նոր գլոհի տարավ, համառ ու կա-

տաղի մարտերից հետո առաջիններից մեկը
մտավ Խարկով և հիտլերյան աղտեղություն-
նից մաքրեց Ռևլուահնայի երկրորդ մայրա-
քաղաքը։ Ամբողջ երկիրը մեծ ցնծությամբ
ու հպարտությամբ արտասանեց Խարկովն-
աղատագրողների անունները։

Գերագույն Գլխավոր Հրամանատար,
Սովետական Միության Մարշալ ընկեր
Ստալինը քաջարի դիվիզիաների անձնա-
կազմին շնորհակալություն հայտնեց, կա-
ռավարությունը նրանց պարզեատրեց Սո-
վետական Միության շքանշաններով, իսկ
գեներալ-մայոր Մարտիրոսյանին՝ երկրորդ
անգամ Կարմիր Դրոշի շքանշանով։

1943 թ. ձմեռային գործողությունները
հմտորեն վարելու շնորհիվ Մարտիրոսյանի
դիվիզիան հակառակորդին պատճառեց կին-
դանի ուժի և տիխնիկայի մեծ կորուստ։ Նա
ոչնչացրեց հակառակորդի 15.870 դինվոր
ու սպա և մեծ քանակությամբ ռազմական
տեխնիկա, գերի վերցրեց հակառակորդի
11.670 դինվոր ու սպա։

Կարմիր Բանակի Գլխավոր շտաբի 1943
թվի հուլիսի 8-ի հրամանով գեներալ-մայոր
Մարտիրոսյանը ձեռնարկում է N հրա-
ձգային կորպուսի կազմակերպմանը, որի
հրամանատար նշանակվում է հենց ինքը:

1943 թ. հարձակողական մարտերուժ
գեներալ-մայոր Մարտիրոսյանի միավորում-
ները անթառամ փառքով պսակեցին իրենց
մարտական դրոշները:

Մղելով պաշտպանողական մարտեր, ու-
սումնասիրելով հակառակողին, կատարե-
լագործելով՝ զորքերի մարտական ուսու-
ցումը, կորպուսը պատրաստվում էր առա-
ջիկա հարձակողական գործողություններին:

1943 թ. օգոստոսին կորպուսի զորամա-
սերը, գեներալ-մայոր Մարտիրոսյանի հրա-
մանատարությամբ, N բանակի մյուս դիվի-
զիաների հետ համագործակցելով, ճեղքեցին
հակառակորդի պաշտպանությունը Մալայա-
Չերնեաչինա—Պոպովկա ուղղմանակատում:

Ոչնչացնելով գերմանական 75-րդ և
68-րդ հետևակային դիվիզիաների կենդանի

ուժն ու տեխնիկան՝ Մարտիրոսյանի գուրամասերը գրավեցին 60 բնակավայր և հակառակորդին կրնկակով հետապնդելով ներխուժեցին Սումի քաղաքը:

Ի նշանավորումն թշնամու դեմ տարած հաղթանակի և Սումի քաղաքը գրավելու՝ Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինը 1943 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով կորպուսի ամբողջ անձնակազմին շնորհակալություն հայտնեց, իսկ 340-րդ, 232-րդ և 167-րդ դիվիզիաներին շնորհեց «Սումիյան» անունը:

Զարգացնելով հաջող հարձակումը և հետապնդելով նահանջող հակառակորդին Ռումինի ուղղությամբ՝ գեներալ-մայոր Մարտիրոսյանի միավորումները շրջանցելով հակառակորդի հիմնական ուժերը, սրընթաց հարվածով գրավեցին Վասիլեկան և Ռոմնին, որի համար կորպուսի կազմի մեջ մտած և մարտերում աչքի ընկած 163-րդ դիվիզիային Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինի

1943 թ. սեպտեմբերի 5-ի հրամանով շնորհվեց «Ռոմնիյան» անունը և անձնակազմին շնորհակալություն հայտնվեց:

Սումիթի և Ռոմնիի համար մղված պայմանը միայն սկիզբն էր գեներալ-մայոր Մարտիրոսյանի կորպուսի մարտական սըխուրագործությունների։ Այդ մարտերով սկսվեց Մարտիրոսյանի կորպուսի մասնակցությունը եղբայրական Ռւկրախնան գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու կովին։

Ոչչացնելով հակառակորդին՝ կորպուսը սրբնթաց առաջ էր շարժվում, թշնամուն դադար չտալով և ավելի ու ավելի սեղմելով նրան Դնեպր գետին։

Գերմանացիների կողմից ամրացված Դնեպրի աջ ափը հակառակորդն անմատչելի ամրոց էր համարում և հույս ուներ զբանով կասեցնել Կարմիր Բանակի զորամասերի առաջխաղացումը։ Բայց Կարմիր Բանակի հերոսական դիվիզիաները, այդ թվում նաև գեներալ-մայոր Մարտիրոսյանի միավորումները, չնայած հակառակորդի

կատաղի դիմագրության, կոտրեցին նրա
համառությունը և օգտագործելով եղած
միջոցները՝ անցան Դնեպը, պլացդարմ
դրավելով գետի աջ ափին՝ Կիևից հյուսիս-
արևմուտք:

Ետ մղելով գերմանացիների կատաղի
հակագրուները՝ գեներալ-մայոր Մարտիրոս-
սյանի զորքերն իրենց հարևան զորքերի
հետ համագործակցելով, պատրաստվում էին
Ռւկրաինայի մայրաքաղաք Կիևի վրա գրո-
հելու:


Կիևի ազատագրումից չորս օր առաջ,
1943 թ. նոյեմբերի 2-ին, ծանր կոիզմերի
պահին, Սարգիս Մարտիրոսյանը ժամանակ
է գտել ջերմ հայրենասիրությամբ պատաս-
խանելու ընկերոջ նամակին՝ հաղորդելով
սովասվող փառապանծ հաղթանակը:

«Միքելի՛ ընկեր, ես կատարում եմ իմ իմ
համեստ պարտքը իմ Սովետական հայրենի-
քի, նրա մեծ ժողովրդի առաջ, իմ սիրելի
հայ ժողովրդի առաջ, որպես նրա հարազատ
զավակ! Հավատացնում եմ Ձեզ, որ ես լի-
ովին կարդարացնեմ հայ ժողովրդի հույ-

սերը, չեմ խնայի իմ ուժերը, եթե պարագան պահանջի՝ նույնիսկ և իմ կյանքը, գերմանական հափշտակիչներին ջախջախելու, վերջնականապես մեր երկրից դուրս քշելու մեծ գործի համար:

Այս տողերը դրում եմ Ձեզ Դնեպր գետի աջ ափից, ահեղ մարտական պարագայում։ Պատերազմների պատմությունը չգիտենման մարտ։ Հավանական է մինչև այս նամակս Ձեզ հասնելը Սովետական Խնֆորմբյուրոն հաղորդի մեր երկրին այս մարտերի արդյունքների մասին։

1943 թ. նոյեմբերի 5-ին Ուկրաինական Առաջին ռազմաճակատի զորքերը ոկրսեցին գրոհել Կիևի վրա։ Քաղաքի համար մղվող մարտերը սկսվեցին հյուսիսային հատվածում հարձակում կատարելու ցույցով, որ իրագործվեց փայլուն կերպով։ Որոշելով, որ այդ ուղղությամբ գործում են մեր գըլխավոր ուժերը, գերմանացիները այստեղ են կենտրոնացնում իրենց ուժերի մեծ մասը և հետզհետե աճող դիմադրություն են ցույց տալիս։



Ամերիկայի առաջնահանձնաժողովը՝ Նիշարում.՝ (աշխատավայր)՝ գոյացած աշխատավայրը, Սուսական գոյացած աշխատավայրը, Սառավական գոյացած աշխատավայրը, 1943 թվականի 2/XXI.

Սակայն քաղաքի վրա գլխավոր գրոհը կատարվեց այլ ուղղություններով՝ նրա արևմտյան ծայրամասից և թշնամու պաշտպանության թերից։

Այս ուղղություններից հասցված հարվածները գերմանացիների համար միանգամայն անսպասելի էին։

Գեներալ-մայոր Մարտիրոսյանի զորքերը գործում էին հարվածող խմբի կազմում։ Նրա կորպուսը համագործակցելով գեներալ-մայոր Պանֆիլովի տանկային միավորմանը, ուժերի մի մասով հարվածում էր քաղաքի արևմտյան ծայրամասում, իսկ գլխավոր ուժերով քաղաքը շրջանցում էր հարավ-արևմուտքից՝ խնդիր ունենալով կտրել հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի արևմուտք և հարավ-արևմուտք։

Մարտիրոսյանի կորպուսի զորամասերը տանկերի հետ միասին առաջինը ներխուժեցին քաղաքի արևմտյան ծայրամասը, իսկ նրա գլխավոր ուժերը հաջողությամբ շըրջանցեցին քաղաքը հարավ-արևմուտքից։

Թշնամին համառ դիմադրություն ցույց

տվեց հենց քաղաքում, բայց այստեղ ևս
ոլարտություն կը եց Ռւկրաինական Առաջին
ռազմաճակատի քաջարի դորքերի կողմից։

Հերոսական Կարմիր Բանակը մեկուսաց-
նելով թշնամու դիմադրության օջախները՝
մաքրում էր թաղ թաղի և առևից, և 1943 թ.
նոյեմբերի 6-ի առավոտյան մեր զորքերը
ազատագրեցին ոռուսական քաղաքների մայր
Կիևը։

Այդ օրը N բանակի հրամանատարի
հրամանով գեներալ-մայոր Մարտիրոսյանը,
որ առաջինը մտավ քաղաք, նշանակվեց
Կիև քաղաքի կայազորի պետ։

Այդ պատմական օրը ազատագրված Կիևի
պատերին երեաց գեներալ-մայոր Մարտի-
րոսյանի հրամանը։

Հ Ր Ա Մ Ա Ն

Աինվ Քաղաքի կայտօղի պետի

6 նոյեմբերի 1943 թ. № 2. Կիև

1.

1943 թ. նոյեմբերի լույս 6-ի գիշերը
Կարմիր Բանակի քաջարի մարտիկները կա-

տարելով Գերազույն Գլխավոր Հրամանաւ-
տար, Սովետական Միության Մարշալ ըն-
կեր Ստալինի հրամանը՝ ջախջախիչ հար-
ված հասցըին թշնամուն և գրավեցին Կիև
քաղաքը:

Ազատագրվեց Ռւկրաինական ՍՍՌ մայ-
րաքաղաք Կիևը՝ ոռւսական քաղաքների
մայրը, Բաղաքի վրա հերոս ազատագրող-
ների ձեռքով բարձրացված Կարմիր Դրոշը
հպարտ ծածանվում է և մեզ կոչ է անում
հետագա սխրագործությունների՝ հանուն
հայրենիքի, Փաշիստական զավթիչներին
մեր սովետական հողից վերջնականապես
վոնդելու համար:

2.

Մարտիկներին, սպաններին և Կիև քաղա-
քի աշխատավորներին շնորհավորում եմ
Սովետական Ռւկրաինայի մայրաքաղաքի
ազատագրման առթիվ, թշնամու գեմ Կար-
միր Բանակի տարած ևս մեկը հաղթանակի
առթիվ:

Աշխատավորներին կոչ եմ անում ամեն
կերպ աջակցել Կարմիր Բանակի զորամա-

ПРИКАЗ

НАЧАЛЬНИКА ГАРНИЗОНА г. КИЕВ

8 марта 1943 г.

№ 2

г. КИЕВ

5.1
С 12 часа с 3 на 6 марта 1943 года доблестные воины Красной Армии, выполнив приказ Верховного Главнокомандующего Маршала Советского Союза товарища СТАЛИНА, нанесли сокрушительный удар по прагу и штурмом овладели городом КИЕВ.

Освобождена столица Украинской ССР город КИЕВ — материнский городов. Воздухоплавание Красное Знамя над городом рухнуло, героя-освободителей города растет и зовет нас излучающее подлинно воинственность Родина, из окончательного изгнания фашистских захватчиков с нашей Советской землей.

5.2

ПОЗДРАВЛЯЮТ рабочих, офицеров и гражданских городов КИЕВ с освобождением столицы Советской Украины, с еще одной блестящей победой Красной Армии над врагом.

Призываю трудящихся к неумеренному содействию тем же Красной Армии в изгнании революционного порока в городе, сохранения государственного имущества, выявление всех немецких шпионов, диверсантов и их пособников.

Да здравствует героическая Красная Армия и ее Верховный Главнокомандующий Маршал Советского Союза товарищ СТАЛИН!

Да здравствует наша Советская Родина — Союз Советских Социалистических Республик!

Да здравствует Советская Украина!

Начальник гарнизона города КИЕВ

Генерал-майор МАСЛЕННИКOV

սերին քաղաքում ռեռլուցիոն կարգ հաս-
տատելու, պետական դույքը պահպանելու,
զերմանական բոլոր լրտեսներին, դիվեր-
սանտներին ու նրանց աջակիցներին հայ-
տաբերելու գործում:

Կեցցե՛ հերոսական Կարմիր Բանակը և
նրա Գերագույն Գլխավոր Հրամանատար,
Սովետական Միության Մարշալ ընկեր
Ստալինը:

Կեցցե՛ մեր Սովետական հայրենիքը,
Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլի-
կաների Միությունը:

Կեցցե՛ Սովետական Ուկրաինան:

Կիև քաղաքի կայազորի պետ՝

գեներալ-մայոր ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ուկրաինական ՍՍՌ մայրաքաղաքի վրա
ծածանվեց սովետական Կարմիր Դրոշը: Ա-
զատագրված կիցիները ջերմորեն ողջունե-
ցին իրենց ազատարաներին:

Թշնամու դեմ տարած հաղթանակի և կիև
քաղաքը գրավելու առթիվ Մարտիրոսյանի
կորպուսի ամբողջ անձնակազմին Գերագույն

Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարզական ընկեր Ստալինի 1943 թ. նոյեմբերի 6-ի հրամանով հայտնվեց շնորհակալություն, իսկ նրա 340-րդ, 232-րդ և 167-րդ «Սումիյան» հրաձիգ դիվիզիաներին շնորհվեց «Կիևյան» անունը: Գեներալ-մայոր Մարտիրոսյանը, կիև քաղաքը գրավելիս մարտական գործողությունները հըմտորեն դեկավարելու համար, արժանացավ կառավարության բարձրագույն պարզեցի՝ Լենինի շքանշանի:

Հայ ժողովուրդը ողջունեց իր քաջարի դավակին ու հպարտացավ նրա սխրագործությամբ:

Հետապնդելով նահանջող հակառակորդին, կատարելով շրջանց մաներներ, հասցնելով թեային հարվածներ, շրջապատելով և ոչընչացնելով հակառակորդի առանձին զորամասերն ու ստորաբաժանումները՝ Մարտիրոսյանի կորպուսը մարտերով անցավ 141 կիոմետր, գրավեց Սկվերան, Բելայա ծերելովը և 219 այլ բնակավայր, հասավ Օրտատովկա—Յուշկիցի—Շուլյակի—Մ. Լուկա-

շնկա բնագծին, որտեղ անցավ ամուռ պաշտա-
պանության՝ զորամասերը կարգի բերելու,
նրանց ռազմակիցներք հայթայթելու և թի-
կունքն ամրացնելու համար:

Մեկ ամսվա մարտերի ընթացքում կոր-
պուսի զորքերը հակառակորդին պատճառե-
ցին անխնիկայի և կենդանի ուժի մեջ կո-
րուստներ:

Թշնամու դեմ տարած այդ հաղթանակի,
ինչպես և Բելայա Ցերկով քաղաքի աղա-
տագրման համար կորպուսի անձնակազմին
Գերազույն Գլխավոր Հրամանատար, Սովե-
տական Միության Մարշալ ընկեր Ստալինը
1944 թ. հունվարի 6-ի հրամանով շնորհա-
կալություն հայտնեց, իսկ կորպուսի 340-րդ,
232-րդ և 167-րդ Սումիյան-Կիևյան հրա-
ձգային դիվիզիաները պարգևատրվեցին
Կարմիր Դրոշի շքանշանով:

Մարտիրոսյանի կորպուսի կազմի մեջ
մտած, ՍՍՌՄ-ում գործող Զեխոսլովակյան
1-ին առանձին բրիգադը, բրիգադային գե-
ներալ Սվորովայի հրամանատարությամբ՝

պարզեատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ
աստիճանի շքանշանով:

Մեր պահանջալի գեներալը այդ մարտերից
հետո, 1944 թվի հունվարի 21-ին գրած իր
նամակում ողջունում է հայ ժողովրդին: Նա
գրում է:

«Անչափ ուրախ եմ իմ հայ ժողովրդի՝
տնտեսական ֆրոնտում ձեռք բերած հայկ-
թանակների համար, ցանկանում եմ Զեղ
Է՛լ ավելի մեծ հաջողություն տնտեսական
ֆրոնտում մղվող պայքարում, ռազմաճա-
կատի պահանջների բավարարման և մեր
մեծ երկրի բարգավաճման գործում»:

* * *

1944 թ. մարտի 9-ին N բանակի շտաբի
հրամանով Մարտիրոսյանի կորպուսն ան-
ցավ վճռական հարձակման, ձեղքեց հակա-
ռակորդի խիստ ամրացված Օբատովկա—
Յուշկևիցի —Մ. Լուկաշենկո բնագիծը:

Հակայական կորուստներ կրելով՝ գեր-
մանացիները ստիպված եղան նահանջել,
ճանապարհին թողնելով իրենց զինվորների

ու սպաների դիակները և զանազան տեսակի ռազմական տեխնիկա:

Այս հարձակողական գործողությունների ընթացքում կորպուսի զորամասերը ոչընչացրին հակառակորդի ավելի քան 16.000 զինվոր ու սպա, գերի վերցրին 3046 զինվոր ու սպա, ոչնչացրին և գրավեցին մեծ քանակությամբ ռազմական ավար:

Հայրենական պատերազմում Կարմիր Բանակի պաշտպանողական և հարձակողական մարտերում գեներալ-մայոր Ա. Մարտիրոսյանը ձեռք բերեց զորք ու մարտեր դեկավարելու, թշնամուն հյուծելու և ոչընչացնելու մեծ փորձ ու հմտություն: Նա իր փառահեղ գործողությամբ քննություն տվեց հայրենիքի, Լենինի—Ստալինի պարտիայի առաջ՝ վաստակելով մեծ վստահություն:

Թե՛ Ուկրաինական 1-ին և թե՛ Ուկրաինական 2-րդ ռազմաճակատներում Մարտիրոսյանը եղել է բոլորի սիրելին: Նրա երկալը մարտիկների ու սպաների մեջ, մանավանդ մարտերի ժամանակ, բարձրացրել է զորքի տրամադրությունը: Մարտիկներն ու սպա-

Ները շարունակ հանդիսատես են եղել, թե
ինչպես անվեհեր գեներալը շատ անդամ
մահվան վտանգի առաջ է կանգնած եղել,
սակայն երբեք չի սարսել և իր անձնական
օրինակով բոլորին հաղթանակի վստահու-
թյուն է ներշնչել:

Մարտիրոսյանի այս գծերը նկատի ու-
նենալով՝ Ն բանակի հրամանատարությու-
նը թշնամու կողմից խիստ ամրացված
Բուգ գետի ամրությունները ճեղքելու և
գետն անցնելու դժվարին խնդիրը դնում է
գեներալ-մայոր Մարտիրոսյանի կորպուսի
վրա: Այդ հեռազիր-հրամանը Մարտիրո-
սյանի մեծ գնահատականն ու բնութագիրն է:
Ահա այդ հեռազիր-հրամանը.

Հեռագիր № ๓๗

11. 3. 44 թ.

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ս. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հետախուզության տվյալներով՝ հակա-
ռակորդը ձգտում է փոքրաթիվ արյերգարդ-
ների ու հրետանու պաշտպանությամբ հիմ-

Նական ուժերը ետ քաշել Բուդ գետի հա-
րավային ափը:

Չեզ մինչև Բուդ գետը մնացել է 40 կի-
լոմետր: Չեր կորպուսը հասել է Բուդ գետի
շատ նպաստավոր մի ելուստի՝ Ռայգորոդ—
Շուրավցիի շրջանում:

Գիտենալով Չեր փորձը, համառությունը,
հմտությունը, հաստատակամությունը, կաղ-
մակերպվածությունը՝ կառավարման գոր-
ծում և վերջապես այն, որ Դուք կորպուսի
կազմում ունեք բանակի լավագույն դիվի-
զիաները՝ հենց դրա համար ես որոշել եմ,
որ Դուք գիշեր ու ցերեկ ուժեղ հարձակում
կատարելով՝ ամենից առաջ անցնեք Բուդ
գետը:

Հավատացած եմ, որ Դուք և Չեր գոր-
քերը այդ խնդիրը պատվով կկատարեք:

Ն բանակի հրամանատար՝

գեներալ-լեյտենանտ ԺՄԱԶԵՆԿՈ

Բանակի Ռազմական Խորերդի անդամ՝
գեներալ-մայոր Կ. ԿՈՒՆԻԿ:

Գերմանացիները համառ կհրպով ամբաց-
նում էին Բուգը՝ հույս ունենալով երկար
ժամանակ և համառորեն պաշտպանվել այս
լայն ու ջրառատ գետի մոտ։ Բայց գենե-
րալ մայոր Մարտիրոսյանի կորսուսի հար-
ձակման տեմպն այստեղ այնքան սրբնթաց
էր, հակառակորդի զորքերին շարունակ
հասցվող հարվածներն այնքան ուժեղ էին,
որ թշնամին դիմանալ չկարողացավ, և
Մարտիրոսյանի զորամասերը ճեղքեցին ու
անցան Բուգի այն ափը՝ կրնկակոխ հետա-
պնդելով գերմանական նահանջող դիվե-
ղիաներին։

Ճանապարհների ցեխը՝ անձրեների և հալ-
վող ձյան պատճառով՝ օրըստօրե ուժեղանում
էր, իսկ Բուգի վրա կատարվող հարձակումը
տեղի էր ունենում ավելի ու ավելի աճող
տեմպերով։

— Ոչ մի ըոպե կանգ չառնել — պահան-
ջում էր գեներալը։

— Կանգ չառնել — կրկնում էին մար-
տիկները։ Հրետանավորները գերմարդկային
ճիղ գործադրելով քաշում էին ցեխի մեջ

Խարվող թնդանոթները և նոր, ավելի հարսմար դիրք բռնհլով՝ անընդհատ կրակ թափում թշնամու զլիսին:

Բուդն անցնելուց հետո Մարտիրոսյանի գորամասերը կատարելով Գերագույն Հրամանատարության հրամանը՝ 1944 թ. ապրիլի 3-ին նովվոսելիցա—Տարասառուցի—Դուռմենի հատվածում անցան Պրուտ գետը Ոչ թշնամու կատաղի հակագրոհները, ոչ ժամանակակից պաշտպանական կառուցումները չկարողացան կասեցնել մեր մարտիկների գրոհը: Շարունակելով հաջող հարձակումը, ջախջախելով և ոչնչացնելով հակառակորդին հենց իր տերիտորիայում՝ գեներալ-մայոր Մարտիրոսյանի զորքերը 6 օրվա ընթացքում անցան Սերետ, Սուչավա գետերը և զրավեցին Գերցա, Դորոխոյ, Սիխաիլեն, Սերետ, Սուչավա, Ռեգենուցի, Մարդինա, Սոլկա քաղաքները:

Կարմիր Բանակի հարձակվող զորքերի առաջին շարքերում Մարտիրոսյանի կորպուսը մարտերով անցավ 321 կիլոմետր և ազատազրից 377 բնակավայր:



Գեներալ-մայոր Ս. Մարտիրոսյանը Բուգ գետը անց-
նելուց հետո զրուցում է 163-րդ հրաձ. դիվիզիայի
մի խումբ հայ մարտիկների ու սպաների հետ
Նստած են (աջից ձախ) կըտսեր լեյտենանտ Աղեկյա-
նը, մայոր Արարածյանը, կապիտան Դավթյանը,
մայոր Գետրոսյանը: Կանգնած են՝ գեներալ-մայոր
Ս. Մարտիրոսյանը, 163-րդ հրաձ. դիվիզիայի հրամա-
նատար, գնդապետ Կառլովը, ավագ սերժանտ Համ-
բարձումյանը և կարմիրբանակային Խաչարյանը:

Այս հաղթանակը բարձր գնահատեց Գեղագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինը և ապրիլի 8-ի հրամանով շնորհակալություն հայտնեց ամենից աչքի ընկած միավորութիւններին, այդ թվում գեներալ-մայոր Մարտիրոսյանի զորամասերին, ինչպես և ամենից ավելի աչքի ընկած միավորութիւն շնորհեց «Պրուտյան» կոչումը։ Շատ սպաներ ու կարմիրբանակայիններ պարզեվատրվեցին ՍՍՌ Միության շքանշաններով ու մեղալներով։

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում խիզախություն, արիություն և հերոսություն ցուցաբերելու համար ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. մայիսի 17-ի Հրամանագրով գեներալ-մայոր Մարտիրոսյանը պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով։

1944 թվի օգոստոսի 22-ին Ուկրաինական Երկրորդ ռազմաճակատի զորքերը ճեղքեցին հակառակորդի խիստ էշելոնաց-

ված Յասսի քաղաքի պաշտպանության գիծը և գրավեցին Յասսի, Տիրզու-Թրումոս, Ունգեն քաղաքները և 200 այլ բնակավայր: Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովհ-տական Միության Մարշալ ընկեր Ստալինի այդ օրվա հրամանում՝ մարտերում աչքի ըն-կած գեներալների թվումն էր նաև կորպուսի հրամանատար Մարտիրոսյանի ազգանունը:

Զեռք բերած հաղթանակի առթիվ կոր-պուսի գիվիղիաներին շնորհվեց «Յասսիյան» անունը:

Ճիշտ այդ օրերին ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից «Ծառայության համար» Ամերիկյան հրամանատարական շքանշանով պարզե-վարվեց գեներալ-մայոր Մարգիս Սողո-մոնի Մարտիրոսյանը:

Ահա հայ ժողովրդի հավատարիմ զավակ գեներալ-մայոր Մարտիրոսյանի գեռ չա-վարտված մարտական ուղին:

* * *

Որմնք են գեներալ-մայոր Մարգիս Մարտիրոսյանի բնավորության բնորոշ

գծերը, մի մարդու, որ կարմիրբանակայինից
հասավ կորպուսի ճրամանատարի ասոի-
ճանին։ Նա աշխատասիր, հաստատակամ,
տաղանդավոր զորավար է, Անսահման
նվիրված լինելով Լենինի—Ստալինի գոր-
ծին, Սովետական հայրենիքին՝ Մարտիրո-
սյանը միշտ ձգտում է էլ ավելի օգտակար
լինել ժողովրդին և այդ գործի համար ոչ
մի ջանք ու եռանդ չի խնայում։

Հայրենիքի զավակ Մարգիս Մարտի-
րոսյանը որքան անողոք է վախկուների
ու ծույլերի նկատմամբ, այնքան զգայուն
և հոգատար է իր ստորադրյալների նկատ-
մամբ։ Կենսական մեծ փորձի տեր լինելով՝
Մարիբոսյանը լավ է հասկանում մարտիկ-
ների ու սպաների հոգեբանությունը, արագ
և հմտորեն լուծում նրանց խնդիրները, բա-
վարարում նրանց կարիքները։

Անվեհեր գեներալը ամեն օր, մարտա-
կան իրադրության բոլոր պայմաններում,
լինում է իր զորքերի մարտակարգում,
թափանցում է ամեն մի մանրունքի մեջ,
իսկույն նկատում թերությունները և հան-

գըստանում է այն ժամանակ, երբ նկատված թերությունները լիովին վերացվում են։ Իր զինվորական պարտքն աղնվորեն կատարող այս ռազմիկը միշտ ձգտում է, որ իրեն վստահած զորամասերը գերազանցուրեն կատարեն մեծ Ստալինի և հայրենիքի պահանջը. և նա միշտ հասնում է իր նպատակին։

Այս է վկայում Ս. Մարտիրոսյանի անցած մարտական ուղին և այդ են վկայում բարձր հրամանատարների հրամաններն ու հիռագրերը, որոնք հրապարակում ենք այստեղ։ Դաստիարակվելով ռազմական արվեստի Ստալինյան դպրոցում, նա ցուցաբերեց ռազմագետի մեծ կարողություն, ռազմական մեծ մասշտարի գործողություններ ծրագրելու և իրագործելու, զորքեր ու մարտեր ղեկավարելու հմտություն։ Այս է վկայում Մարտիրոսյանի նոր նշանակման առթիվ Ն բանակի հրամանատարի 1944 թ. ապրիլի 24-ի հետեւյալ հրամանը.

«Ն հրաձգային կորպուսի հրամանատար գիներալ-մայոր Ս. Մարտիրոսյանը ռազ-

ժաճակատի զորքերի հրամանատարի հրամանով նշանակվել է այլ պաշտոնի և այս կապակցությամբ մեկնում է բանակի կազմից:

Գեներալ-մայոր ընկեր Մարտիրոսյանը 1943 թ. նոյեմբերից եղել է բանակի կազմում գործող Ն հրաձգային կորպուսի հրամանատար։ Այդ ժամանակամիջոցում նա իրեն ցույց է տվել որպես միավորումների լավագույն հրամանատարներից մեկը գերմանական զավթիչների դեմ մղած պայքարում։

Ընկ. Մարտիրոսյանն իր ռազմական գիտելիքներն ու հարուստ ռազմական փորձը ամեն օր և հմտորեն օգտագործել է հարձակողական և պաշտպանողական մարտական գործողությունների ընթացքում, որի հետևանքով կորպուսի զորամասերը դժվարին պայմաններում և մարտական ծանր իրադրության մեջ առաջ են ընթացել՝ աղատագրելով Ռւկրախնայի և Մոլդավիայի հարյուրավոր բնակավայրեր ու քաղաքներ, ոչնչացնելով հակառակորդի մեծ ուժեր։

Հրամանատարության բոլոր հրաման-

ները կորպուսի զորամասերը կատարել են
հաջողությամբ:

Իր զինվորական պարտքն ազնվորեն
կատարելու և մարտական գործողությունների ժամանակ կորպուսի զորամասերը
հմտորեն ղեկավարելու համար գեներալ-
մայոր ընկ. Մարտիրոսյանին հայտնում եմ
շնորհալալարյուն:

Ցանկանում եմ Զեղ, լնկեր Մարտիրոս
սյան, լավագույն հաջողություններ մեր
ժողովրդի թշնամուն վերջնականապես ոչընչացնելու ասպարեզում սպասվող առաջիկա
մարտերում:


Ն բանակի զորքերի հրամանատար՝
Սովետական Միության Հերոս,
գեներալ-լեյտենանտ ԺՄԱ.ՉԵՆԿՈ
Ռազմական Խորհրդի անդամ՝
գեներալ-մայոր Կ. ԿՈՒԼԻԿՅԱ:

Գեներալ-մայոր Մարգիս Մարտիրոսյանը
մեծ վաստակ ունի Ն հրաձգային կորպուսում. նրան սրտանց ու ջերմ սիրել ու
հարգել են իր կորպուսի մարտիկները, սպաներն ու գեներալները, նա եղել է նրանց
ավագ մարտական ընկերը, նրանց հայրը:

Ահա թե ինչպիսի ջերմ ու երախտաւ գիտական զգացմունքներով են բաժանվում Մարտիրոսյանի զինակիցներն իրենց սիրած անվեհեր գեներալից:

Ստորև հրապարակում ենք ՍՍՌՄ-ում Առաջին առանձին Զեխոսլովակյան Սուվորովի և Բոգդան Խմելնիցկու շքանշանակերով պարզապատճեն բրիգադայի հրաժանաւութեար՝ բրիգադային գեներալ Լյուդվիգի Սվոբոդայի և 163-րդ հրած. դիվիզիայի հրամանատար գնդապետ Կառլովի հրաժեշտի նամակները՝ ուղղված գեներալմայոր Մարտիրոսյանին.

«Հրաժեշտ տալով Զեղ և Զեր կորպուսին՝ ես խնդրում եմ ընդունել անձօւմբ ինձանից և մեր բրիգադայի բոլոր զինվորներից ու սպաներից անկեղծ երախտագիտական արտահայտությունն Զեր բարեկամական վերաբերմունքի համար դեպի մեղ, այն օգնության և հոգատարության համար, որ Դուք մշտապես ցույց եք տվել մեղ մեր մարտական գործունեության ընթացքում՝ Զեր հրամանատարության տակ։



Ուկրաինական Հ-րդ ռազմահակառակ Ն կորպորակ հրամանատար՝ գեներալ-մայոր
Ա. Ռ աբովի ընուանը. իր գործառնությունը՝ հրամանատարների հետ:
Նստած են (աջից ձախ) Սովորական Միության հերոս գնդապետ Ռևանսկին,
դիմելքաղմայութ Սարտիրոսյանը, բլիգուդային գեներալ Լյուգլեր Սլովոդան և
գեներալ-մայոր Բումանյանը:

Մենք կովել ենք որպես բարեկամներ ընդհանությամբ զետքությամբ դեմ և ընդմիշտ կմնանք որպես լավագույն բարեկամներ: Ես հաստատ համոզված եմ, որ մենք դարձյալ կհանդիպենք, հնարավոր է՝ մոտիկ ապագայում, արդեն մեր ազատագրված հայրենիքում:

Ցանկանում եմ Զեկ անձամբ և Զեր կորպուսի բոլոր մարտիկներին ու սպաներին լավագույն հաջողություններ Զեր հետագա մարտական գործունեության ընթացքում:

Գործող բանակ. 8 մարտի, 1944 թ.

Խորապես Զեզ հարգող՝

Սուվարսվի և Բօգդան Խմելնիցկու շքանշանակիր, ՍՍՌՄ-ում Զեխոսլովակյան Առաջին առանձին բրիգադի երամանատար՝
Բրիգադային գեներալ ԼՅՈՒԴՎԻԳ ՍՎՈԲՈԴԱ»

«Ն ՀՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐԹՈՒՄԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԼՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Ն հրաձգային կորպուսի հրամանատարի պաշտոնից Զեր հեռանալու և նոր պաշտոնի

նշանակվելու պահին թույլ տվեք մեզ դիւ
վիզիայի ամբողջ անձնակազմի անունից
արտահայտել Ձեզ խորին հարգանք և հրախ-
տագիտություն:

Մեր դիվիզիան երբեք չի մոռանա, որ N
հրածգային կուրպուսի կազմը Ձեր հրա-
մանատարությամբ վերցրեց Ռոմնին և
ստացավ «Ռոմնիյան» անունը, Ձեր ղեկա-
վարությամբ մասնակցեց Ռւկրախնայի մայ-
քաքաղաք Կիևի ազատագրմանը և ստացավ
«Ռոմնիյան-Կիևյան» պատվավոր անունը,
N հրածգային կուրպուսի կազմում Ձեր հրա-
մանատարությամբ դիվիզիան արժանացավ
կառավարական բարձրագույն պարգևի՝
Լենինի շքանշանի:

Մենք անկեղծորեն ափսոսում ենք, որ
Դուք հեռանում եք մեր կուրպուսի հրամա-
նատարի պաշտոնից, բայց մենք հույս
ունենք, որ մեր հայրենիքը գերմանա-ֆա-
շիստական զավթիչներից լիովին ազատա-
գրելու համար մզվելիք մարտերում մենք
դեռ շատ անգամներ պատիվ կունենանք

Զեղ հանդիպելու և թշնամուն ջախջախելու
մինչև նրա լիակատար ոչնչացումը,

163-րդ հրաձգային Ռոմնիյան-Կիւյան
Լենինի շքանշանակիր դիվիզիայի

հրամանատար՝ գնդապետ ԿՈ.Ռ.ՌՈՎ.

24 ապրիլի, 1944 թ.

Գևորգալ Մարտիրոսյանը քաջ զորա-
վար է, իր զորքերի համար հոգատար հայր,
ավագ ընկեր, հայրենասիրության փայլուն
օրինակ։ Հենց այդ հատկությունների շնոր-
հիվ է, որ նա թափանցել է իր ռազմիկների
հոգու խորքը։ Նրան հատուցել են մեծագույն
հարգանքով։ Թիրևս գրա գեղեցիկ ապացույց-
ներից մեկը համարվի «Մենք մարտիրոսյա-
նականներ ենք» քայլերգը, որ գրել են ու
ձայնագրել 340-րդ դիվիզիայի ռազմիկները։

«Քայլերգը նվիրում ենք մեր բարեկամ
ու հրամանատար գեներալ-մայոր Ս. Ս. Մար-
տիրոսյանին», — գրում են հեղինակները։ Ահա
այդ քայլերգը ոռւսերեն և նրա բառացի
թարգմանությունը հայերեն։

МЫ МАРТИРОСЯНОВЦЫ

У Волги ты создал отряд боевой,
Как сокол отважный ты ринулся в бой,
Повел полки саратовцев и пензенцев на бой
За родину, за Сталина, за наш народ родной.

Припев

Веди же нас на бой с врагом,
Врага мы разгромим,
Мы мартirosяновцы,
Вперед, мы победим.

Ты сердце России пошел защищать,
Чтоб варварам-немцам Москву не отдать;
В суровые зимние дни под Москвой
Ты побеждал, командир наш герой.

Припев

В боях с Гудерианом один из первых был,
К столице Краснозвездной ты путь врату закрыл,
Ты защищал Россию как верный сын страны,
С тобою грозной силой мы шли, твои сыны.

Припев

На берегу у Дона, на высоте Урыв
Ты слышал вражьи стоны—
—Когда делал там прорыв,
В реке Дону поили мы боевых коней,
В Дону-рекетопили непрошенных гостей.

Припев

Ты грозною лавиной мощь врага ломал,
 Родную Украину от недруга спасал;
 Чтоб бить врага без промаха, приказ страною дан,
 На то ведь командиром у нас Мартиросян.

Припев

Под твоим водительством
 К победе мы пойдем,
 С тобой вместе скоро мы
 Победу воспоем . . .

ՄԵՆՔ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԱԿԱՆՆԵՐ ԵՆՔ

Վոլգայի մոտ դու ստեղծեցիր մարտական ջոկատ,
 Խիզախ բազեի նման դու մարտի նետվեցիր,
 Սարատովցիների և պենզացիների գնդերը դու մարտի
 տարած
 Հանուն Ստալինի, հանուն մեր հարազատ ժողովրդի:

Կրկներք

Տար, ուրեմն, մեղ թշնամու դեմ պայքարի,
 Մենք թշնամուն կջախջախենք,
 Մենք մարտիրոսյանականներ ենք,
 Առաջ, մենք կհաղթենք:
 Դու Ռուսաստանի սիրուը պաշտպանելու գնացիր,
 Որպեսզի բարբարոս գերմանացիներին Մոսկվան
 չտաս,

Զմեռվա խստաշունչ ցըտերին Մոսկվայի մոտ
 Դու հաղթում էիր, մեր հերոս հրամանատար:

Կրկներգ

Դուդեբիանիի դեմ մղված մարտերում դու
առաջիններից մեկն էիր,
Դու փակեցիր դեպի Կարմըստող մայբաքաղաք
տանող ուղին,
Դու Ռուսաստանը պաշտպանում էիր որպես հրկրի
հարազատ զավակ,
Քեզ հետ մենք՝ քո զավակներդ գնում ենք որպես
ահեղ մի ուժ։

Կրկներգ

Դոն գետի ափին, Ուրիշվ բարձունքում
Զարդեցինք թշնամուն՝ տևողույան գայլերին,
Դոն գետում ջըեցինք մեր մարտական ձիերին,
Դոն դետում խեղդեցինք այդ անկոչ հյուրերին։

Կրկներգ

Դու որպես ահեղ ուժ կոտըում էիր՝ թշնամու
հզորությունը,
Հարազատ Ռւկրախնան թշնամուց ազատում էիր,
Երկիրը հրաման է տվել՝ թշնամուն անվրեալ խփել,
Դրա համար մենք ունենք հրամանատար

Մարտիրոսյան

Կրկներգ

Քո զեկավարությամբ
Մենք կգնանք դեպի հաղթանակ
Քեզ հետ միասին մենք ամենուք
Հաղթանակի երգը կերպենք . . .

Գեներալ-մայոր Մարտիրոսյանը
մեծ հեղինակություն և հարգանք է վայե-
լում ոչ միայն ռազմաճակատում, իր դե-
կավարած զորքերի մեջ, այլև Սովետական
Միության թիկունքում։ Ամեն անգամ,
երբ ընկեր Ստալինի հրամաններում հիշա-
տակվում է գեներալ Մարտիրոսյանի ա-
նունը, նա բազմաթիվ ողջույնի հեռագրեր
է ստանում սպատ ու հզոր Վոլգայի ափե-
րից՝ բանվորներից, կոլխոզնիկներից, ին-
տելիգենցիայից։ Ռուսական Բալաշով քա-
ղաքը, որտեղ կազմակերպվել է Մարտի-
րոսյանի լեգիներար դիվիզիան, սրտատրով
հետեւում է իր քաջարի գեներալի սխրագոր-
ծություններին ու հպարտանում դրանցով։
Ահա այդ հուղիչ փաստաթղթերից մեկը, որ
գրված է Մարտիրոսյանին Լենինի շքանը-
շանով նրա պարգևատրվելու առթիվ։

«ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,

Բալաշով քաղաքի աշխատավորների ա-
նունից ջերմագին շնորհավորում ենք Զեղ՝
Հայրենական պատերազմի քաջարի մաք-

տիկիդ, գերմանական զավթիչների գեմ մըզ-
վող ոլայքարի ռազմաճակատում Հրամանա-
տարության առաջազրանքներն օրինակե-
լիորեն կատարելու համար Լենինի շքանը-
շանով պարզեատրվելու առթիվ և ցանկա-
նում ենք Զեղ ու Զեղ վստահած զորքերին
առողջություն և հետազա մարտական սըխ-
բագործություններ:

Զեղ և մեր ենթաշեֆ Կարմիր Դրաշի
շքանշանակիր 340-րդ Սումեյան-Կիւյան
հրաձգային դիվիզիոնային տրված բարձր
պարզեց մեղ ոգեշնչում է է՛լ ավելի մեծ
աշխատանքային սխրագործությունների, և
մենք հավաստիացնում ենք Զեղ, որ ան-
խոնջ կերպով կամրապնդենք մեր կապը
ռազմաճակատի հետ և կտասնապատկենք
մեր աշխատանքն ի փառ մեր հաղթանակ-
ների՝ գերմանաւ Փաշիստական ճիվաղների
դեմ մղվող կռվում:

Մեր հերոսական կարմիր Բանակին
փառք:

Կհցցե՛ Գերագույն Գլխավոր Հրամանա-

տար, Մովեսական Միության Մարշալ ընկեր ՍՏՈԼԻՆԸ:

Համկ (բ)Պ Բալաշովի քաղկոմի
քարտուղար՝ ԿՈՒԶՆԵՅՑՈՎ
Բալաշովի քաղգործկոմի նախագահ՝
ԻԳՆԱՏՈՎ»

* * *

Մարտիրոսյանը ոչ միայն բոցաշունչ
հայրենասեր է, անձնուրաց գորավար, այլև
իսկապես սիրող հայր ու հիանալի մարդ։
Չի կարելի անտարբեր, առանց խորին
հուզմունքի, կարդալ նրա նամակները՝ հաս-
ցեագրված Երևանում ապրող իր հարազատ-
ներին՝ աղջիկներին և կնոջը։ Այդ նամակ-
ները լի են հայրական անսահման գորովով
ու սիրով, մարդկային են ու համակող, Ահա
այդ նամակներից մեկը, որը գրված է 1942
թվի հուլիսի 8-ին.

«Միրելի և անմոռանալի Շողիկ, Աստ-
ղիկ, Լենիկ և քաղցրիկ իրինա ջան,
Գրում եմ ձեզ այս տողերը և միաժա-
մանակ պատրաստվում եմ մարտի։ Մարտի

ընթացքի մասին կզրեմ հաջորդ նամակում
ես առայժմ առողջ եմ, նույնը և ավելին
ցանկանում եմ ձեզ: Թե որքան եմ կարոտել
ձեզ, գրչով նկարագրել և ընդհանրապես
պատկերացնել չեք կարող: Գարնանային և
նրան հաջորդող ամառային եղանակները և
հարուստ բնությունն է՝ ավելի գրգռում են
իմ կարոտը դեպի ձեզ և բուռն ցանկու-
թյուն արթնացնում ձեզ տեսնելու, գրկելու
և անվերջ համբուրելու... Երբ կարդում եմ
ձեր նամակների այն տողերը, որոնք վերա-
բերում են իմ լենիկիս և իրինայիս, այն
մասին, որ իմ աղիղ բալիկներս մեծացել
են, սիրունացել, անսահման ուրախությու-
նից աչքերս թացանում են և այդ մոմեն-
տին ցանկանում եմ թոշել ձեզ մոտ, ամուր
սեղմել ձագուկներիս և անվերջ համբուրել:
Շատ խնդրեցի, աղաչեցի, որ ուղարկեք ինձ
ձեր նկարները, բայց չկատարեցիք իմ մի-
ակ խնդիրը: Լավ չեք անում, որ ինձ կա-
րոտ եք թողնում:

Գրեք ձեր առողջությունից, Երեանի
նորություններից, ստացմք արդյոք մեր

գրած նամակներն ու նկարները,թե ոչ:
Առայժմս, աղիղներս, այսքան։ Կարոտով և
ամուր գրկում եմ բոլորիդ և ջերմորեն ու
անվերջ համբուրում։ Բարեներս ու համ-
բույրներս բոլոր իմ հարազատներին, բարե-
կամներին, ընկերներին։

Ձեր Սարգիս։

Մազմական արվեստի Ստալինյան դըպ-
րոցի տաղանդավոր գեներալ Մարտիրոսյա-
նի մասին սրտառուչ երգեր են գրել հայ-
բանաստեղծները։ Այդ երգերում արտա-
հայտված է հայ ժողովրդի վեճ սերը հան-
դիալ իր քաջարի զավակի։

Եվ նա արժանի է մեր ժողովրդի մեծ
սիրուն։

Մենք դեռ շատ անգամ կլսենք հայկա-
կան դյուցազուն Սարգիս Մարտիրոսյանի
ուազմական հոչակը։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043115

[204]

ԳՐԱԴԱՐԱՆ

9 A. I
7000